ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2020 թ.

ACYOWorld

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Կազմեց՝ ՀԵՀԵՄ ԿԳ հասարակական կապերի
գծով փոխտնօրեն Անգելինա Ալեքսանյանը

Երիտասարդական ծրագրերի ուղեցույց

Ըստ էության՝ երկուսն էլ ծառայում են երիտասարդների բարօրությանը, սոցիալականացմանը և հավելյալ գիտելիքների ստացմանը, սակայն իրարից տարբերվում են որոշակի նպատակներով, հետևաբար նաև՝ ակնկալվող ու ստացված արդյունքներով։

Երիտասարդների կողմից իրականացվող ծրագրերը ստեղծում են տարատեսակ հնարավորություններ։ Ինչպես օրինակ՝

- ազատ ժամանակ զվարճալի և հետաքրքիր գործունեություն ծավալել երիտասարդական միավորումներում կամ թեմական կենտրոններում,
- ընկերների հետ տեղական երիտասարդական միություններում ներգրավվելու միջոցով զարգացնել անձնական և սոցիալական հմտությունները, հարստացնել հոգևոր գիտելիքները,
- ներգրավվել կամավորական ծրագրերում և սովորել նոր հմտություններ,
- մասնակցել և նախաձեռնել կրթական ծրագրեր,
- առողջ ապրելակերպի մասին գիտելիքների խորացում,
- մասնագիտության ընտրության կամ նոր բիզնես սկսելու հարցում մասնագիտական խորհրդատվություն ստանալ, ապա նաև տրամադրել,

- այլընտրանքային կրթության հնարավորություն։

Երիտասարդական ծրագրերի ուղեցույցի մշակման ընթացքում մենք կենտրոնացնում ենք մեր ուշադրությունը ավելի շատ հնարավորությունների, այլ ոչ թե խնդիրների վրա։ Հետևաբար, դիտարկելով քրիստոնյա երիտասարդներին որպես նոր հնարավորությունների հսկայական կապիտալ, փորձելու ենք օգտագործել սոցիալական ինտեգրացիայի տարատեսակ գործիքներ՝ երիտասարդներին ավելի մոտ դարձնելու համար Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն։

Քրիստոնեական Երիտասարդկան աշխատանքի առաջնահերթություններն են՝

- Հոգևոր անվտանգություն,
- առողջություն և բարեկեցություն,
- կրթություն,
- ընտանիք,
- համայնք,
- աշխատանք և/կամ ձեռներեցություն,
- բնապահպանություն։

ՀԵՀԵՄ կենտրոնական գրասենյակը մշակել և առաջարկում է քրիստոնեական երիտասարդական աշխատանքի հետաքրքիր և արդյունավետ գաղափարներ, որոնք կօգնեն թեմական երիտասարդներին դիտարկել դրանք «երիտասարդների կողմից իրականացվող ծրագրերի» և «երիտասարդների համար ծրագրերի» տեսանկյունից՝ գրանցելով երկարաժամկետ արդյունք երկու կողմից էլ։

Երիտասարդների կողմից իրականացվող ծրագրեր

1. Սոցիալապես անապահով և տնանկ մարդկանց համար շաբաթօրյա սնունդ

Թեմական երիտասարդական միության անդամները յուրաքանչյուր շաբաթ օր պատրաստում են սենդվիչներ և հյուրասիրում անտուն և կարիքավոր մարդկանց։

Մենք գիտենք, որ նմանատիպ ծրագիր իրականացնելու համար երիտասարդներին հարկավոր է գումար, որն էլ կարող են հայթայթել կիրակի օրերին սիրո ճաշ կազմակերպելով համայնքի հավատացյալների համար, որտեղ մեկ բաժին սնունդը հավատացյալները կարող են գնել մի փոքր ավելի թանկ, քան իրական արժեքն է։ Հավաքված ամբողջ գումարը կծախսվի շաբաթ օրերին սոցիալապես անապահով մարդկանց կերակրելու համար։

2. Գրիր նամակ զինվորին

Երիտասարդական միությունների անդամները ջերմ ու բարեմաղթանքներով լի նամակ են գրում անծանոթ զինվորին Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ։

3. Կամավորություն տեղի դպրոցներում

Յուրաքանչյուր թեմ ունի հանրակրթական դպրոցներ։ Կարելի է կապ հաստատել դպրոցի տնօրենության հետ և հարցնել, թե կարող են արդյոք

երիտասարդները ինչ-որ կերպ օգնել իրենց: Երիտասարդները կարող են կամավոր սկզբունքով օգնել ուսուցիչներին՝ սկսած դպրոցի և շրջական տարածքի մաքրման աշխատանքներից, վերջացրած տարեկան միջոցառումների կազմակերպչական աշխատանքներով և դասարանի ուսումնական վատ առաջադիմություն ունեցող երեխաների հետ դասապատրաստում անելով:

4. Սովորեցրու նոր տեխնոլոգիաներից օգտվել

Այս ծրագրի շրջանակներում եկեղեցու երիտասարդները սովորեցնում են համայնքի տարեց բնակիչներին նոր տեխնոլոգիաներից օգտվել, կարգավորում են նրանց հեռախոսները, համակարգիչները, հնարավորություն են ստեղծում շփվելու հեռվում բնակվող հարազատների հետ: Սերունդների համատեղ աշխատանքն ու փոխօգնությունը կնպաստի միմյանց ավելի լավ հասկանալուն, արժեքավոր հմտություններ կհաղորդի և կամրապնդվեն միջսերնդային հարաբերությունները:

5. Տարածեք խինդ

Երիտասարդները իրենց թեմի մանկական հիվանդանոցի հիվանդների համար բացիկներ են պատրաստում, ինչը շատ հեշտ է կազմակերպել երիտասարդական հերթական հանդիպումներից մեկի ժամանակ, ինչպես նաև ծախսատար չէ:

6. Շնորհակալություն բոլոր նվիրյալներին

Երիտասարդները շնորհակալական խոսքերով բացիկներ են պատրաստում բուժաշխատողների, ոստիկանների, ուսուցիչների, հրշեջների, ԱԻՆ աշխատակիցների համար:

7. Ցույց տուր քո տաղանդը

Երիտասարդները իրենց թեմում առկա տարեցների խնամքի կենտրոնում ցույց են տալիս իրենց տաղանդները (պար, երգ, որևէ ներկայացում)։ Ինչպես նաև կարող են տարեցներին սովորեցնել ազգային պարեր, այդպիսով հետաքրքրություն մտցնելով նրանց կյանքում։

8. Երեխայի խնամք

Թեմի աշխատող միայնակ մայրերին եկեղեցու երիտասարդները կարող են օգնել երեխայի խնամքի կամ ցերեկային զբաղմունքի հարցով։ Վերցնելով երեխային դպրոցից և ապահովելով նրա ցերեկային զբաղվածությունը ապահով վայրում, այն է՝ եկեղեցու հարկի տակ, մեծապես կօգնեն միայնակ մայրիկներին։

9. Սուրբ Ծննդյան ընդունելություն

Մասնակցություն Հայրապետական Սուրբ Ծննդյան Պատարագին. երիտասարդական դաշտում ակտիվ ՀԿ-ների ներկայացուցիչների, մեր երկրի հասարակական, հայրենական, ազգային կյանքում ներդրում ունեցած երիտասարդների ընդունելություն Վեհափառ Հայրապետի մոտ։

10. Տարեցների խնամքի կենտրոնում կամավորություն

Թեմական երիտասարդները այցելում են տարեցների խնամքի կենտրոններ, զրուցում նրանց հետ, կարդում Աստվածաշունչ, օգնում առօրյա կենցաղային խնդիրները լուծել կենտրոնում և կազմակերպում մշակութային միջոցառումներ։

11. Պահք և գիտակցված սննդառություն

Դասընթացը բաղկացած է 12 թեմաներից, որոնց ընթացքում լինելու է ընդհանրական, տեսական, գործնական և խոհարարական մաս, ինչպես նաև սննդի պատրաստում և համտես: Երիտասարդները ծանոթանալու են պահոց սննդի առանձնահատկությունների հետ:

12. Այցելություն դիրքեր

Թեմական երիտասարդները իրենց հոգևոր հովվի հետ միասին այցելում են դիրքեր, հոգևոր զրույց ունենում զինվորների հետ, քաջալերում և գոտեպնդում նրանց:

13. Նվիրիր գիրք դպրոցին

Յուրաքանչյուր տարի ամռանը թեմական երիտասարդները կկազմակերպեն գրքերի հավաք, որոնք սեպտեմբեր ամսին կնվիրեն տեղի դպրոցի գրադարանին:

14. Դարի մարտահրավերներն ու երիտասարդը

«Դարի մարտահրավերներն ու երիտասարդական լուծումները» ծրագրի նպատակն է բարձրաձայնել բոլոր այն մարտահրավերները, որ մեր ժամանակաշրջանում այնքան տարածված են և լսելի դարձնել երիտասարդության ձայնը առկա բոլոր խնդիրների վերաբերյալ: Տալ երիտասարդներին մտածելու, քննարկելու հնարավորություն և արտահայտվելու տարատեսակ վիճահարույց թեմաների շուրջ՝ նպաստելով առողջ բանավեճի և ինֆորմացիոն հոսքի հանդեպ ընտրական վերաբերմունք ձևավորելու էթիկային: Ինչպես նաև հնարավորություն ընձեռել լսելու հոգևորականի և համապատասխան աշխարհիկ մասնագետի խոսքը

թեմայի վերաբերյալ, խորհուրդներ ու նոր հավաստի տեղեկություն ստանալու համար թեմային առնչվող: Ծրագրի թեմաներն են՝

1. Ազգ-հայրենիք-հայրենասիրություն և Քրիստոնեական բարոյախոսություն,

2. Քաղաքականապես ակտիվ երիտասարդություն,

3. Ավանդական և ազատական վարքագծային մոդելները երիտասարդության շրջանում,

4. Հակասոցիալական վարքի մոդելները (թմրամիջոց, ծխախոտ, ալկոհոլ),

5. Էկոլոգիական վարքի մոդել և Կանաչ Աստվածաբանություն,

6. Կարիերա, կրթություն, աշխատանք,

7. Սեր, սիրահարություն, ողջախոհություն,

8. Դաջվածքներ և Քրիստոնեական բարոյախոսություն,

9. Էֆթանազիա,

10. Հղիության արհեստական ընդհատում,

11. Օրգանների փոխպատվաստում,

12. Կլոնավորում:

15. Երիտասարդական ուխտագնացություններ

Երիտասարդները տարեկան ուխտագնացությունների փաթեթ կկազմեն դեպի ՀՀ տարբեր վանքեր, եկեղեցիներ և իրենց հոգևոր հովվի առաջնորդությամբ ու օրհնությամբ կիրականացնեն դրանք:

16. Հոգևոր անվտանգության դասընթաց

Դասընթացը նախատեսված է ավագ դպրոցի թվով աշակերտների համար՝ ամիսը մեկ անգամ: Թեմական երիտասարդները հանդիպումներ կկազմակերպեն նրանց համար, որպեսզի ծանոթանան հետևյալ թեմաներին՝

- Աղանդ, հերձված, հերետիկոսություն,
- «Եհովայի վկաներ»,
- «Կյանքի խոսք»,
- Ավետարանականներ,
- «Նորհոգեգալստականները»,
- Հոգեգալստականներ,
- Մորմոններ,
- Մունիստներ:

17. Պատարագը իբրև 2000-ամյա հոգևոր-մշակութային գանձ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ամիսը մեկ անգամ: Մասնակիցները՝ երիտասարդներ և հասարակական սեկտորի ներկայացուցիչներ, որոնք ակտիվ երիտասարդական գործունեություն են ծավալում տվյալ թեմում:

18. Սոցիալական ձեռներեցություն, գաղափարների գեներացում, ծրագրի ստեղծում

Ծրագիրը իրականացվում է բոլոր թեմերի երիտասարդների համար: Ամիսը 1 անգամ, 2 օրով՝ յուրաքանչյուր օրը 4 ժամ տևողությամբ: Այն միտված է ակտիվացնելու դրամաշնորհային ծրագրեր գրելու հմտություններ ունեցող երիտասարդների ներուժը, ուղղորդելու և օգնելու, որպեսզի որոշակի գիտելիքներ

ձեռք բերելուց հետո նրանք իրենց թեմերում երիտասարդական ծրագերի իրականացման հարցում ունենան իրենց ներդրումը:

Ծրագրին մասնակցություն կունենան նաև Սփյուռքի թեմերի այն երիտասարդները, ովքեր տվյալ ժամանակահատվածում կլինեն Հայրենիքում:

19. Միջթեմական հանդիպումներ

Տարվա կտրվածքով իրականացվելու են թեմերի երիտասարդների, ատենապետերի հետ հանդիպումներ՝ փոխհամագործակցության և միջթեմական համագործակցության ծրագրերի պատրաստման, դրանց իրագործման և կազմակերպչական աշխատանքների քննարկման համար:

Մշտական կապի մեջ լինելով ՀՀ և Սփյուքի թեմերի երիտասարդական միությունների պատասխանատուների հետ՝ ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակը կկազմակերպի միջթեմական և «Քույր թեմեր ծրագրի» շրջանակներում նախատեսվող 10 հանդիպումներ՝ 8 հոգանոց խմբով :

Հանդիպումները կազմակերպվելու են ըստ անհրաժեշտության:

20. Կիբերանվտանգություն, համակարգչային հիգիենա, համացանցային էջերի, վեբկայքերի ստեղծում

Ծրագրի նպատակն է երիտասարդներին հասու դարձնել համացանցի միջոցով կիրառվող, բայց բարոյական և նյութական վնաս պատճառող հնարքների մասին և զերծ պահել դրանցից, ինչպես նաև համացանցում փնտրել և գտնել կրթական ծրագրեր:

Էջերի և վեբկայքերի ստեղծման վերաբերյալ տալ նախնական գիտելիքներ, հմտություններ և արդյունավետ կիրառման հնարքներ, որոնց միջոցով կակտիվացվի թեմերի երիտասարդական միությունների գործունեությունը լուսաբանող տեղեկատվության գրագետ տարածումը և դրա խթանումը: Աշխատանք էլեկտրոնային գրատախտակով:

Սեմինարի անցկացման համար անհրաժեշտ է տեխնիկապես հագեցած աշխատասենյակ, ուստի նպատակահարմար է դասընթացն անցկացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկեան հանրակրթական դպրոցում:

21. Առաջնորդական կարողությունների հմտացում

Ծրագրի նպատակն է թեմերի ակտիվ երիտասարդերին հմտացնելու առաջնորդական կարողությունների մեջ:

Երիտասարդական միությունների ատենապետերը հաճախակի փոխվում են: Միությանը անհրաժեշտ են առաջնորդական հմտություններով երիտասարդներ, ովքեր ունակ կլինեն երտասարդությանը համախմբելու Հայ Եկեղեցու շուրջ: Կուսանեն առաջնորդական ունակությունների ճիշտ օգտագործման, թիմային մշակույթի ստեղծման մասին, կզարգացնեն առաջնորդական և թիմին ոգեշնչելու հմտությունները: Կջանան ստեղծել և պահպանել առողջ հարաբերություններ, հարթեցնել միմյանց միջև ի հայտ եկած տարաձայնությունները և դրանց դրական փորձառության ելք տալու հմտություններ ձեռք բերել և այլն:

Դասընթացը կիրականացվի երկու անգամ՝ հուլիս, օգոստոս ամիսներին, երկու օրով՝ 5 ժամ տևողությամբ, խումբը՝ 25 հոգի:

22. Ատենապետաց ժողով

2 տարին մեկ անգամ ՀՀ և Սփյուռքի թեմերի երիտասարդաց միության ատենապետերի և հոգևոր պատասխանատուների ժողով. օրակարգում համահայկական ուխտագնացության կազմակերպչական հարցերն են և իրենց տարածաշրջաններում ժողովների կազակերպումը:

23. «Քո և իմ հոգևոր հովիվը» ամառային ուխտագնացություն

Տարին երկու անգամ իրականացնել միջթեմական ուխտագնացություն, մասնակցություն Սբ. Պատարագին, հանդիպում տեղի քահանանաների հետ։ Երկու թեմերից ընտրված երիտասարդներն իրենց հոգևոր պատասխանատուների հետ, հավարտ Սուրբ Պատարագի, հանդիպում կունենան ընտրված թեմի մի քանի քահանաների հետ՝ Ավետարանական պատգամների մատուցման և հոգևորական դառնալու իրենց կայացման ճանապարհի մտերմիկ զրույցների շրջանակներում, հոգևոր խաղերի, վիկտորինաների ուղեկցությամբ։

24. «20 տարի Վեհափառի հետ»

Թեմերի երիտասարդների ուխտագնացություն դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, տարին չորս անգամ՝ մայիս, հունիս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին, հանդիպում Վեհափառի հետ, շրջայց՝ Սբ. Հրեշտակապետաց եկեղեցի, Մայր Տաճար, Մկրտարան, Գարեգին Ա կրթական կենտրոն, Վաչե Թամար Մատենադարան, Գանձատուն, Ռուբեն Սևակ թանգարան, այցելություն Վեհարանի նորաբաց թանգարան-սրահ։

25. «Մերօրյա երիտասարդը և Սուրբ Գիրքը»

Ծրագրի նպատակն է խթանել հասարակության մեջ Սուրբ Գրքի իմացությունը։ Այն միտված է իրականացնել երիտասարդության հետ և նրանց ուղղորդել դեպի Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին։

Տևողությունը՝ ամիսը 4 անգամ՝ 1-ական օր դասախոսություն։ Տևողությունը 2.5 ժամ։

26. Սուրբ Սարգիս Զորավարի տոնին այցելություն զորամասեր

Յուրաքանչյուր տարի՝ Սուրբ Սարգիս Զորավարի տոնին ընդառաջ, թեմական երիտասարդաց միության հոգևոր պատասխանատուի գլխավորությամբ երիտասարդները խրախուսական այց են կատարում ՀՀ որևէ զորամաս։ Օրհնության և գնահատանքի խոսք է ասվում։ Ծրագրի նպատակն է երիտասարդների հայրենասիրության ու ազգային գիտակցության ամրապնդումը, զինծառայողների մարտական ոգու բարձրացումը։

27. Էկո-բնապահպանական երիտասարդական ուխտագնացություն

Ծրագրի նպատակն է համախմբել էկո-բնապահպանական հիմնախնդիրներով անհանգստացող թվով 50 երիտասարների և տարին 2 անգամ կազմակերպել էկո-բնապահպանական արշավ-ուխտագնացություն դեպի Հայաստանի որևէ հեռավոր խոնարհված եկեղեցի, մաքրել ու բարեկարգել տարածքը, կատարել ժամերգություն։

28. Առաջին օգնության հմտությունների սերտում

Թեմական երիտասարդները այցելում են բուժհաստատություն և այնտեղ փորձում իրականացնել կամավորական աշխատանք՝ միժամանակ սովորել առաջին օգնություն ցուցաբերելու հմտություններ։

Ժամանցային ծրագրեր երիտասարդների համար

1. Սուրբգրային ուղեցույց

Ծրագիրը ենթադրում է թեթև ժամանցային-ուսուցողական խաղ երիտասարդների համար, որի ընթացքում վերջիններս բաժանվում են խմբերի և յուրաքանչյուր խմբին տրվում է Սուրբ Գրքրից մի հատված, որպեսզի մեկնաբանեն։ Խաղը վարող հոգևորականը անպայմանորեն ապահովում է հետադարձ կապը և երիտասարդների մեկնությունից հետո տալիս է տվյալ հատվածի ճիշտ մեկնությունը։ Կհաղթի այն թիմը, որը առավել շատ ճիշտ մեկնություններ կանի։ Այս ծրագրի միջոցով երիտասարդները մի լավ կզվարճանան, միևնույն ժամանակ կճանաչեն Սուրբ Գիրքը։

2. Վստահիր ինձ

Մենք պետք է սովորենք ապավինել ու վստահել միմյանց։ Խաղի նպատակն է փոխաջակցող ու միմյանց վստահող երիտասարդներ դաստիարակելը։ Մեզ անհրաժեշտ են կոներ, ազատ տարածք և աչքերի կապիչ։ Երիտասարդներին բաժանում ենք 3-4 հոգուց բաղկացած փոքր թիմերի, փակում ենք յուրաքանչյուր թիմից մեկի աչքերը։ Խումբը պետք է խոսքով առաջնորդի փակ աչքերով խմբակցին, որպեսզի նա կոներով խոչընդոտների միջով հասնի վերջնակետին։ Եվ երբ հասնի վերջնակետին, այնտեղ պետք է կարդա իրեն սպասվող Աստվածաշնչյան տողերը։

3. Բարի խոսք

Երիտասարդները կարդում են Եփեսացիներ 4:32 հատվածը, խոսում այն մասին, թե որքան կարևոր է բարի ու հոգատար լինել միմյանց հանդեպ: Անհրաժեշտ է թղթի կտորներ, որոնց վրա յուրաքանչյուր մասնակից երիտասարդ գրում է իր անունը, գցում տարայի մեջ: Այն մասնակիցը, որը հանում է անունը, պետք է գրատախտակին նկարի անվան տիրոջը և բարի խոսքեր ասի նրա մասին: Մյուս մասնակիցները պետք է կռահեն, թե ում մասին է խոսքը: Երբ խաղն ավարտվի, բոլորը միասին պետք է խոսեն, թե ինչպիսի զգացողություններ ունեն:

4. Աստվածաշնչյան որ կերպարն ես դու

Երիտասարդները հնարավորություն են ստանում իրենց ներկայացնելու և մյուսների մասին լսելու՝ այդպիսով ինտեգրվելով խմբի մեջ:

- Տալիս եք երիտասարդներին մի քանի րոպե, որպեսզի նրանք մտածեն, թե Աստվածաշնչյան որ կերպարին են իրենք իրենց նմանեցնում:
- Ընտրեք մեկին, որպեսզի սկսի առաջինը:
- Վերջինս, մտքում պահելով ընտրված կերպարը, հուշումներ է անում, թե ինչ ընդհանուր գծեր ունի ինքը ընտրված կերպարի հետ:
- Մյուս մասնակիցները փորձում են կռահել կերպարին:

5. Մեր առ հավատ

Երիտասարդները նստում են շրջանաձև, և յուրաքանչյուրը գրում է թղթի վրա, թե ինչն են նրանք առավել շատ սիրում քրիստոնեական հավատի մեջ: Ապա բոլոր գրառումները խառնում են և հերթով քաշում՝ փորձելով կռահել, թե ով է գրել այդ պատասխանը:

6. Բանավեճի ակումբ

Այս ծրագիրը և՛ ժամանցային է, և՛ ուսուցողական։ Հնարավորություն է տալիս թեմական երիտասարդներին լսելի դարձնել իրենց ձայնը, սոցիալիզացվել, գտնել համակարծիք ընկերներ, ստանալ տեղեկատվություն տարբեր թեմաների շուրջ և պարզապես հաճելի երիտասարդական ժամանց ունենալ։ Բանավեճի ակումբը կարող է ձևավորվել ու գործել թեմի երիտասարդական կառույցի ներսում, ապա անցնել միջթեմական հանդիպումների և քննարկումների, իսկ վերջում նաև դուրս գալ բանավեճի երիտասարդական հասարակական տարբեր կառույցներում գործող ակումբենրի հետ։